



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



1853



Ե Կ

1999

ՍԱՄԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՔԵՐՈՎԱԾՎԱԿԱՑՈՒԹՒՆՆԵՐՈՎ

ՊԱՏՇԱԽԵԿԵՆԵԲ

Բայլոր Առաջապահական Դիրքը գոգակար
ալ է սորվեցընելու : Այսուհետեւնելու : Հնարին-
շու : ու արդարութեան իրադատելու համար :
(Ք Տիմ . դ . 16 ,)

Վ Ա Ս Ե Կ Դ Ա Ր Ե Վ Ո Ւ Տ Ա


Տ Պ Ա Ր Ա Խ Ա Ր Ա Խ Ա Ր Ա Խ

1853





Կ Ե Ր Ե Խ Ո Ւ
Հ Ա Ր Ց Ա Մ Ի Ա Ն Ե Բ




668

Բողոք Աստվածաշալունկ Պիրու Խօդապահոր
աւ է առվեցընելու , յանդիմանելու , չկոկելու ,
ու արդարութեան իրադրելու համար :
(Բ Տիմ . գ . 16 :)

Կ Ո Ս Ե Ն Դ Ե Ո Ւ Գ Օ Լ Ի Ս

Դ Տ Զ Գ Ա Ր Ա Ն Ի Ա . 9 . 2 6 1 2 1 1 1

1853



28304-62

43705-16-L




884-ho

28 886

НЕКЛАССИФИЦИРОВАННЫЕ

ԵՐ ՊԱՏՐԸ ԳՐԱՎՈՐԻ

ՔԵՐՈՏԱՇ ՎԿԱՑԱՌՈՒԹԵՐՆԵՐՆ Ա



1. Ըրբեաք Գոտք կը բերեն թէ դաւն անմահ
Հոգի մը ուսիս՝ որ մարմինէդ անշափ աւելի ար-
ժէք ունի :

Ըստ ատենը հողը երկիրը պիտի դառնայ՝ առջե
եղածին պէս . ու հոգին Աստուծոյ պիտի դառ-
նայ , որ զանիկա տուաւ : (Ժող . Ժը . 7 :)

Եւ մի՛ վախնաք անոնցմէ՝ որ մարմինը կը սպան-
նեն, ու չեն կրնար հոգին սպաննել։ Հապա ա-
ւելի անկէ՛ վախցէք դուք, որ կրնայ հոգին ու
մարմինը գեհենին մէջ կորսնցընել։ (Վարք. 7.
28.)

2. Արգեօք մտմտացի՞ր ընաւ որ մարդուս
հոգին ապականեալ վիճակի մը մէջ է, և հետեւ-
ապէս յաւիտենական մահուան վտանգին մէջ ալ է:

Աչան ևս անօրէնութիւնով ծնայ, ու իմ մայրս
մեղքով յղացաւ զիս : (Առաջ + Տար + 5 :)

Արդար մը չկայ՝ ոչ մէկ հատ մը : (Առաջ +
Պ. 10 :)

Բնութեամբ բարկութեան որդիք եխնք՝ ինչպէս
ուրիշները : (Եփես + Է + 3 :)

3. Գիտե՞ս արդեօք որ Առւրբ Գիրքը՝ մեր
հոգիներուն փրկութեանը վրայօք խորհելը առա-
ջն և ամենէն կարեոր բան ըլլալուն վրայ համա-
զելու համար, ազդու և մեղ արթնցընող խրատ-
ներով լեցուն է :

Այսօր թէ որ անոր ձայնին պիտի լսէք, Զեր
սրտերը մի՛ խստացընէք բարկացընելու ատենին
պէս անապատին մէջ փորձութեան օրը : (Եփ +
Պ. 7, 8 :)

Դուք ալ պատրաստ կեցէք, քանզի Որդին
մարդոյ կու գայ անանկ ժամու մէջ՝ որ դուք չէք
կարծեք : (Առաջ + Իդ. + 44 :)

Ի՞նչ կը շահի մարդ մը՝ թէ որ բոլոր աշխար-
հը վաստըկի, և իր անձը կորսընցընէ. կամ իր
անձին համար ի՞նչ աղատչէք պիտի տայ մարդ :
(Առաջ + Ժդ. + 26 :)

4. Արդեօք բնաւ խռոված չե՞ս աս ծանրա-
կշիռ մտածութիւնով որ՝ ով գիտէ կրնայ ըլլալ
թէ ժամանակէն առաջ յաւիտենականութեան
կանչուիս՝ յանկարծ ու անակնկալ մէկ հարուած-

քով մը , և մինչեւ անդամ Ավայրկեան մըն ալ՝
խորհելու կամ աղօթք ընելու ժամանակ չունենաս ,
և կամ գոնէ քիչէն քիչ մէկ պատրաստութիւն
մը ընելու ՅԵՒԻՍԵՆԵԿԵՇՈՒԹԵԱՆ համար :

Վաղուան համար մի' պարծիք . վասն զիշես գիւ-
տեր թէ օրը ինչ պիտի ծնանի : (Ղ. մ. թէ . 1 :)
Եւ ըսաւ . Աս ընեմ . իմ ամբարներս քակեմ
ու ալ աւելի մեծ շինեմ , և հոն ժողվեմ իմ բռ-
լըր բերքերս ու բարիքներս . Եւ իմ անձիս ըսեմ .
ԱՎ անձս՝ շատ բարիքներ ունիս շատ տարիներու
համար ժողվուած . հանդչէ , կեր , խմէ , և ու-
րախ եղիք : Բայց Աստուած ըսաւ անոր . Անմիտ
աս գիշեր հոգիդ քեզմէ պիտի պահանջուի . ուս-
տի ան քու պատրաստած բաներդ որո՞ւն պիտի
ըլլայ : Այսպէս է անիկա՝ որ իր անձին համար
գանձ կը դիզէ , ու Աստուծոյ չարստանար :
(Ղ. մ. ժէ . 18 — 21 :)

5 . Աստուածային օրէնքը կոտրեցիք , ու ամե-
նամեծ Արարիչը բարկացուցիք . և կը տեսնես արդ-
եօք աս բաներուն մեղսալից ու վտանգաւոր ըլ-
լալը . և խոնարհութեամբ կը խոստովանիս , ու ա-
նոնցմէ ճշմարտապէս զղացելի ես :

Աստուած , հիմա ամէն տեղ կը պատուիրէ բոլոր
մարդոց՝ որ ապաշխարեն : (Գործ . ժէ . 30 :)

Հապա թէ որ չապաշխարէք , ամէնքդ ալ նոյն
պէս պիտի կորսուիք : (Ղ. մ. ժէ . 5 :)

Եւ նայէ թէ արդեօք չար ճամբու մէջ եմ , և
զիս դէպ ՚ի յաւիտենական ճանբան առաջնորդէ :
(Ապող . ՃՂԾ . 23 , 24 :)

8 . Խելքդ հասե՞ր է որ Աստուծոյ օրէնքը սուրբ ,
արդար , և բարի ՚է : Դուն քեզ անով փորձեցի՞ր : Գիտե՞ս արդեօք թէ ան օրէնքը հոգեւոր է ,
ու անոր համար ալ ՚ինչպէս որ քու խօսքերուդ ու
դործքերուդ կը հասնի՝ անանկ ալ մինչև քու խոր-
հուրդներուդ և դիտաւորութիւններուդ կը հաս-
նի . և թէ՝ ինչ և իցէ բանով մը թէ որ անիկա
աւրես , դատապարտեալ ես :

Լսեր էք որ ըսուեցաւ առաջիններուն . Ապա-
նութիւն մի՛ ըներ . և ով որ սպանութիւն ընէ ,
դատաստանի պարտաւոր պիտի ըլլայ : Բայց ես
ձեզի կըսեմ . Ով որ իր եղքօրը պարապ տեղը
սրդողի , դատաստանի պարտաւոր պիտի ըլլայ :
Լսեր էք որ ըսուեցաւ . Ընութիւն մի՛ ըներ :
Բայց ես ձեզի կըսեմ . Ով որ կնիկ մարդու կը
նայի անոր ցանկանալու համար , ալ անիկա իր
սրտին մէջ շնութիւն ըրաւ անոր հետ : (Ապող .
Է . 21 , 22 . 27 , 28 :)

Ես ալ առանց օրէնքի ատեն մը կենդանի էի .
բայց երբոր պատուիրանքը վրաս հասաւ , մեղքը
ողջընցաւ , Եւ ես մեռայ . ու ան պատուիրանքը
որ կենաց համար էր , նոյնը ինծի մահուան հա-
մար եղաւ : (Հետով . Է . 9 , 10 :)

ՈՎ որ բոլոր օրէնքը պահէ , ու մէկ բանի մէջ

յանցաւոր ըլլայ , անիկա ամենուն պարտական
կ'ըլլայ : (Յակ . բ . 10 :)

9 . Գիտե՞ս արդեօք թէ քու անձնական ար-
դարութիւնդ գաշտանի լաթի պէս է , և ըստ ինք-
եան ամենեին բաւական չէ քեզ արդարացընե-
լու . և թէ ինչ և իցէ կերպով անոր ապաւինե-
լու չէս որ Աստուած անով քեզ կ'ընդունի :

Եւ մէկ քանիներուն՝ որոնք իրենց անձերուն
վրայ կը վստահանային թէ արդար են , և ու-
թիշները կ'անարդէին , աս առակը ըստ . Երկու
մարդ ելան տաճարը աղօթք ընելու . մէկը փարի-
սեցի ու մէկալը մաքսաւոր : Փարիսեցին կայներ
էր , ու առանձին այսպէս աղօթք կ'ընէր . ԱՎ
Աստուած՝ շնորհակալ եմ քեզմէ , որ ուրիշ մար-
դոց պէս չեմ , յափշտակող՝ անիրաւ՝ շնացող , և
կամ աս մաքսաւորին պէս . Հապա շաբաթը եր-
կու անդամ ծոմ կը պահեմ , ու բոլոր ստաց-
ածքիս տասանորդը կու տամ : Եւ մաքսաւորը
չեռուն կայներ էր , ու չէր ուզեր աչքն ալ եր-
կինքը վերցընել . Հապա իր կուրծքը ծեծելով
կ'ըսեր . Աստուած՝ ողորմէ՛ ինձի մեղաւորիս : Զեզի
կ'ըսեմ՝ թէ ասիկա ան մէկալէն աւելի արդարա-
ցած իր տունը իջաւ . վասն զի ով որ իր անձը կը
բարձրացընէ , պիտի խոնարհի . և ով որ իր
անձը կը խոնարհեցընէ , պիտի բարձրանայ :
(Պ . մ . Ժ . 9 — 14 :)

Բայց ամէնքս պիղծ բանի պէս եղանք , ու մեր

քոլոր արդարութիւնները դաշտանի լաթին պէս է . և ամէնքս տերեւի պէս կը թառամինք , ու մեր անօրէնութիւնները հովի պէս մէզ կը վերցընեն : (Եսայ . կդ . 6 :)

Չէ թէ արդարութեան գործքերէն՝ որ մենք ըրինք , հապա իր ողորմութեանը համեմատ մեզ փրկեց նորէն ծնանելու աւաղանին միջոցովը՝ ու Առւրբ Հոգիին նորոգելովը : (Տիգ . դ . 5 :)

10 . Թմէ որ խղճի մտօք համոզուած ես ու աս կարեօր Ճշմարտութիւնները ներդործութիւն ըրած են քեզի , արդեօք գիտեն թէ միայն Առւրբ Հոգին քու սրտիդ մէջ կատարեալ փոփոխութիւն մը կրնայ ընել . և թէ դուն Առւրբ Հոգիին ծնանելու ես , եթէ ոչ Աստուծոյ թաղաւորութիւնը չես կրնար տեսնել :

Յիսուս պատասխան տուաւ . **Ճշմարիտ** Ճըշմարիտ կ'ըսեմ քեզի , թմէ որ մէկ մարդ մը ջուրէն ու Հոգիին չնանի , չկրնար Աստուծոյ թաղաւորութիւնը մտնել : (Յոհ . դ . 5 :)

Իսկ մենք չէ թէ աս աշխարհիս հոգին առինք , հապա ան Հոգին՝ որ Աստուծմէ է . որ մենք Ճանչնանք ան բաները որ Աստուծմէ տրուեցաւ մեզի : Իսկ նէշաւոր մարդը Աստուծոյ Հոգիին բաները չընդունիր . ինչու որ անոնք իրեն յիմարութիւն են , ու չկրնար ալ գիտնալ , ինչու որ հոգեօր կերպով կը քննուին : (ա Կորն . բ . 12 . 14 :)

11. Թէ որ քու խղճիդ խայթովը կը տանջութս . թէ որ կ'աղաղակես թէ "Ի՞նչ ընեմ որ փըրկուիմ" . Աստուծոյ սէրը ինչ ըլլալը մտածեցի՞ք արդեօք՝ որիր Որդին աշխարհի մեղացը համար մեռնելու տուաւ : Հաւտացի՞ր որ Յիսուս Քրիստոս՝ Կստուած է ամէնուն վրայ , օրհնեալ յաւիտեանս . բայց մարմին առաւ՝ որ քեզի համար մեղք ըլլայ , ան՝ որ մեղք չէր գիտեր : Ու միտք ունիս ականջ դնելու , խեղճ՝ ու կորուսնալ մեղաւոր , երբոք Քրիստոսի պաշտօնեայները քեզի կ'աղաղակեն Քրիստոսի կողմանէ՝ որ Կստուծոյ հետ հաշտուիս : Պիտի գա՞ս իրեն . պիտի ընդունիս զինքը . պիտի վստահանա՞ն քու խեղճ՝ կործանեալ հոգիզ անոր յանձնելու՝ որ փրկուիս , ու քու բոլոր մեղքերէդ մաքրուիս անոր արիւնովը , և Կստուծոյ առջեւը արդարանաս :

Եսիկա վկայութեան եկաւ՝ որ Լոյսին համար վկայէ , որ ամէնքը անոր միջոցովը հաւատան : Եւ Բանը մարմին եղաւ , ու մէր մէջը բնակեցաւ : (և անոր փառքը տեսանք , աօրմէն միածնի փառքին պէս ,) շնորհքով ու ճշմարտութիւնով լեցուն : (Յոհ . ա . 7 . 14 :)

Ես որ կը հաւատայ անոր՝ չդատապարտուիր . և ան՝ որ չհաւատար , անիկայ արդէն դատապարտուած է . ինչու որ Կստուծոյ միածին Որդւոյն անուանը չհաւատաց : (Յոհ . գ . 18 :)

Ինչու որ ամէնքը մեղք գործեցին , և Կստուծոյ

փառքէն պակած են : Եւ անոր շնորհքովը ձրի կ'արդարանան Յիսուս Քրիստոսով եղած փրկութեամբը . Որ զանիկա առաջուց սահմանեց Կոտուած հաւատքով քաւութիւն ըլլալ անոր արիւնովը , Կոտուծոյ երկայնմտութեան ատենները առաջուց գործուած մեղքերուն թողութիւն տալովը իր արդարութիւնը ցուցընելու համար : (Հոգէ դ . 23—25 :)

12. Տեղեակ ես արդեօք թէ փախչելու տեղ մը չունիս , թէ որ ասանկ մեծ փրկութեան մը վրայ զանցառութիւն ընես . և թէ՝ մինչեւ որ Յիսուս Քրիստոսի արիւնովը չարդարանաս՝ որ օրէնքին կատարումն է ան ամենուն արդարութեան համար որ կը հաւատան , քու մեղքերուդ մէջը պիտի մեռնիս . և ոչ այսչափ միայն , այլ նաև գիտե՞ս արդեօք որ մեղքերուն ամենէն մեծն է Քրիստոսի արիւնն ու իր ըրած քաւութիւնը անարդելը :

Ենոր համար ձեզի ըսի թէ՝ Ձեր մեղացը մէջ պիտի մեռնիք . ինչու որ եթէ չհաւատաք թէ եմ , ձեր մեղացը մէջ պիտի մեռնիք : (Յոհէ լ . 24 :)

Ենոր համար պէտք է մեզի՝ ալ աւելի ուշադրութիւն տալ , մեր լսած բաններուն , որ չըլլայ թէ երբէք պակսինք : Վասն զի թէ որ ան խօսքը՝ որ հրեշտակներուն ձեռքովը զրուցուեցաւ , հաստատուն եղաւ , և ամեն յանցաւորութիւն ու անհնազանդութիւն արդար հասուցում՝ առաւ , ասպա

մենք ինտոք պիտի աղատինք՝ թէ որ անհոգ ըլլանք
անանկ մեծ փրկութենէ մը, որ խօսելուն սկիզբը
Տէրոջմէն առաւ, ու լսողներուն ձեռքովը մեզե
հաստատուեցաւ : (Եբք. բ. 1—3 :)

Մէկը թէ որ Մովսէսին օրէնքը անարգէր, ա-
ռանց ոզորմութեան երկու կամ իրեք վկաներով՝
կը մոռնէր . ալ որչափ սաստիկ պատժոյ արժա-
նի պիտի սեպուի անիկա, որ Կստուծոյ Արդին
ոտքի տակ առաւ, և ուխտին արիւնը անմաքուր
սեպեց, որ անով ինքը սրբուեցաւ, և շնորհաց
Հոգին նախատեց : (Եբք. ժ. 28, 29 :)

13. Թէ որ կը խոստովանիս որ Քրիստոս
արիւնովը արդարացած ես հաւատքով, ու Ես-
տուծոյ զաւակ եղած՝ Առւրբ Հոգիէն ծնանելով՝
գիտես արդեօք որ ան երջանիկ վիճակին մէջ գըտ-
նուելու վրայով՝ Առւրբ Գրոց տուած մի միայն
վճռական ապացոյցը՝ քու սրտիդ Հոգւով՝ Արք-
քով Ճշմարիտ սրբացուցմամբը կ'ըլլայ . անանկ որ
Առւրբ Հոգիով մարմինին գործքերը կը սպաննես՝
քու կիբքերդ ու ցանկութիւններդ խաչը հանելով,
ու աս չար աշխարհէն դուրս ելլելով: Եւ նոյն
ատենը Հոգւոյն պտուղը քու սրտիդ մէջն ըլլա-
լով, վարուցդ ու խօսակցութեանցդ մէջ կ'երևի՝
առ Կստուած ունեցած պարտաւորութիւններդ կա-
տարելով, և բոլոր մարդոց բարիք ընելով՝ մանա-
ւանդ հաւատքի ընտանիքէն եղողներուն :

Եւ գուք մէկ քանիներդ անանկներ եիք • բայց լուացուեցաք, բայց սրբուեցաք, բայց արդարացաք Տէր Յիսուսի անունովը, ու մեր Եստուծոյ Հոգիովը: (ա Կորն . դ . 11 :)

Եւ անոնց համար ես իմ անձս կը սրբեմ, որ իրենք ալ ճշմարտութիւնով սրբուած ըլւան: (Յովհ . ԺԷ . 19 :)

Որ իր անձը մեզի համար տուաւ, որ մեզ ամէն անօրէնութենէ աղատէ, ու մաքրէ իրեն սեպ հական ժողովուրդ ընէ՝ բարի գործքերու նախանձաւոր: (Տէփ . բ . 14 :)

Մեզ կը խրատէ՝ որ ամբարշտութիւնը ու աշխարհային ցանկութիւնները ուրանանք, և զգաստութիւնով ու արդարութիւնով և բարեպաշտութիւնով ապրինք աս աշխարհիս մէջ: (Տէփ . բ . 12 :)

Կաև կրնայ մէկը ըսել թէ Դուն հաւատք ունիս, ես ալ գործքեր ունիմ • գուն քու հաւատքդ ցուցուր ինծի առանց գործքերու, ու ես քեզի ցուցընեմ իմ հաւատքս իմ գործքերէս: (Յակ . բ . 18 :)

14. Միտքդ կը պահես արդեօք թէ որչափ ալ որ բոլոր հոգեւոր օրհնութիւնները յայտնուած են Քրիստոսով՝ Եստուծոյ ամենամեծ ու անգին խոստմունքներուն մէջ, բայց տակաւին անոնք մինտուելու է. և չէ թէ միայն այսչափ՝ այլ և մարտնչելու է անոնց համար, ջերմեռանդ աղօթքով մինչև որ ընդունիս. Յիսուսի նայելով որ իր մահուան զօրութիւնովը քու մեղացդ հին մարդը կոր-

ծանի , ու դուն ալ կենաց նորոգութեան մէջ
քայլս :

Ինդրեցէք՝ և պիտի տրուի ձեզի . փնտռեցէք՝
և պիտի գանէք . դուռը զարկէք՝ և պիտի բաց-
ուի ձեզի : (Վառ . Է . 7 :)

Ես Տէրս խօսեցայ , ու պիտի կատարեմ : Տէր
Եհովան այսակէս կ'ըսէ . Իսրայէլի տանը ինդը-
ռւաճքը ալ պիտի ընդունիմ , ու անոնց ասիկա
ընեմ : (Եղ . ԼՂ . 36 , 37 :)

Եհան անիկա աղօթք կ'ընէ : (Գործ . թ . 11 :)

Ենդադար աղօթք ըրէք : (ա . թաւ . Է . 17 :)

Ես գիտնանք՝ որ մեր հին մարդը անոր հետը
խաչուեցաւ , որ մեղաց մարմինը փճանայ , որ աս-
կէ ետև մեղքի չժառայենք : Իսյց գոհութիւն
Եստուծոյ , որ թէ և դուք մեղաց ծառայ էիք ,
տակայն սրտանց հնազանդեցաք ան վարդապետու-
թեան գաղափարին՝ որ ձեզի յանձնուեցաւ : Ուս-
տի դուք մեղքէն աղատ ըլլալով՝ արդարութեան
ծառայ եղաք : (Հառ . Ղ . 6 , 17 , 18 :)

Ուստի եթէ դուք՝ որ չար էք , ձեր զաւակնե-
րուն աղէկ ընծաներ տալ գիտէք , որչափ աւելի
ձեր հայրը երկինքէն Առուրը ողբին պիտի տայ
անոնց , որ իրմէ կը ինդըն : (Գոհ . Ժա . 13 :)

15 . Հնորհաց միջոցները գործածելու կողմա-
նէ ժի՞ր ես արդեօք : Տէրոջը օրը կը սիրեն , ու կը
պատռեն , ու սուրը կը պահեն : Երդեօք անիկա
աւրուած չեն սեպեր՝ ծուլութեամբ , կամ անձնա-
թ 2

կան հաճոյքդ կատարելով, կամ գործով զբաղելով
անցընելու որ ըլլաս : Բոլորովին հոգւոյն գործքե-
րուն և յաւիտենականութեան նուիրելը , և Ես-
տուծոյ սեփական ծառայութեանը գործածելը , քու
պարտաւորութիւնդ ու արտօնութիւնդ ըլլաւ կը
սեպե՞ս :

Հանդստութեան օրը մի' տքդ բեր՝ տնիկա սուրբ
պահելու համար : Վեց օր պիտի աշխատիս , ու
բոլոր գործդ ընես . Բայց եօթներորդ օրը՝ Տէրո-
ջը քու Եստուծոյդ հանդստութեան օրն է . ան
օրը գործ մը պիտի չգործես , ոչ դուն՝ ոչ քու
որդիդ՝ ոչ քու աղջիկդ՝ ոչ քու ծառադ ու ա-
ղախինդ՝ ոչ քու անասունդ՝ ոչ ալ տանդ մէջ
եղած օտարականդ . Քանզի Տէրը վեց օրուան մէջ
ըրաւ երկինքը ու երկիրը՝ ծովը ու բոլոր անոնց
մէջ եղածները , և եօթներորդ օրը հանդստացաւ .
անոր համար Տէրը օրհնեց հանդստութեան օրը՝
ու սրբեց զանիկա : (ԵԼԷՅ . ի . 8 — 11 :)

16. Փորձառո՞ւ ես արդեօք որ Եստուծոյ Ճամ-
բաները քաղցրութեան ճանբաներ են : Թէ քու
պարտաւորութիւններուդ ճամբուն մէջ քալելու
հարկադրեալ չես միայն անոր համար որ գերա-
գոյն իշխանութենէ հրամայուած է , բայց անոր
համար որ իրեն ծառայելը կատարեալ ազատու-
թիւն է . և թէ քանի որ սրբութեան կը հետևիս ,
սիրտդ կ'ուրախանայ թէ՛ հիմակուան զգացած գո-
հունակութիւնովդ , և թէ գալու մեծամեծ բանե-
րուն վրայ ունեցած ապահովութիւնովդ ու ա-
ռաջմանէ ունեցած զգացումնովդ :

Ամբողջներ՝ հիմա մենք Աստուծոյ որդիքն ենք, և տակաւին յայտնի չեն թէ ինչ պիտի ըլլանք. բայց գիտենք որ երբ անիկա յայտնուի, անոր պէս պիտի ըլլանք. վասն զի անիկա պիտի տեսնենք՝ ինչ պէս որ է: (ա Յով. • դ. • 2.):)

Եւ ան օրը պիտի ըստս + ո՛վ Տէր՝ քեզ՝ պիտի օրհնեմ, որ թէև ինձի բարկացած էիր, սակայն բարկութիւնդ ինձմէ դարձաւ, և զիս միսիթարեցիր: Եհան իմ փրկութիւնս Աստուած է. ես պիտի յաւսամ, ու պիտի չվախնամ. քանզի իմ զօրութիւնս ու օրհնութիւնս Տէր Եւ Հոգուն է. ու անիկա իմ փրկութիւնս եղաւ: Եւ ուրախութեամբ ջուր պիտի քաշէք փրկութեան աղբիւրներէն: (Եսայ. • ժը. • 1—3.):

Անոր Ճամբաները հաճոյական Ճամբաներ են, և անոր բոլոր շաւիզները խաղաղութիւն են: (Առաք. • դ. • 17.):

Ուստի մենք հաւատքով արդարացած ըլլալով խաղաղութիւն ունինք Աստուծոյ հետ՝ մեր Տէրով Յթ Յիսուս Քրիստոսի ձեռքովը. Որուն միջոցովը ընդունեցինք հաւատքով աս շնորհքիս մօտենան ալ, որուն մէջը կեցեր ենք, և Աստուծոյ փառաց յուսովը կը պարծինք: Եւ ո՞չ միայն այսքան, հապա նաև նեղութիւններու մէջ կը պարծինք. ինչու որ գիտենք՝ թէ նեղութիւնը համբերութիւն կը գործէ, Եւ համբերութիւնը փորձառութիւն, ու փորձառութիւնը՝ յոյս: (Առաք. հ. • 1—4.):

17. Արդեօք կը յարգե՞ս Աւետարանին քառողութիւնը ու շարունակ անոր ներկայ կը դրտնուի՞ս . անդանդաղ յօժարութեամբ Սուրբ Գիրքը կը քննե՞ս , հասկընալով որ Յիսուս Քրիստոսի վրայ եղած հաւատքովը փրկուելու իմաստուն ըլլալու համար որոշուած միջոցները անոնք են :

Ուրեմն հաւատքը լսելէն է , ու լսելը Աստուծոյ խօսքէն : (Հայութ . Ժ . 17 :)

Եաւ քու մանկութենեդ ՚ի վեր Սուրբ Գիրքերը դիտես : Երանք կը քննան իմաստուն ընել քեզ փըսկուելու՝ Քրիստոս Յիսուսի վրայ եղած հաւատքովը : (Բ Տիմ . Պ . 15 :)

Որչափ կը սիրեմ քու օրէնքեդ . ան է ամէն օր իմ մտածութիւնս : (Ասող . ՃՃԾ . 97 :)

Գիրքերը քննեցէք . ինչու որ դուք անոնցմով կը սեպէք յաւիտենական կեանքը ունենալ . և բուն անոնք են որ ինձի համար կը վկայեն : (Յանք . Ե . 39 :)

Բաց իմ աչքերս , որ քու օրէնքեդ հրաշքներ տեսնեմ : (Ասող . ՃՃԾ . 18 :)


Կսոնք թեսաղնիկեի մէջ եղողներէն աւելի աղնիւ մարդիկ էին , որ Աստուծոյ խօսքը կատարեալ յօժարութեամբ ընդունեցին , և ամէն օր Գիրքերը կը քննէին՝ թէ աս բաները ասա՞նկ է : (Գործ . ԺԷ . 11 :)

18. Ինքզինքդ քննելու ետեւէ ե՞ս շարունակ , սրտի մտօք և հաւատարմութեամբ՝ ամէն բանէն

աւելի դուրսէն բարեպաշտ երևոյթ մը ձեացընեւ-
լէն ու կեղծաւորութենէն վախնալով : Միտքդ
կու գայ արդեօք որ Սուրբ Գիրքը ոմանց վրայ
կը խօսի թէ կը խորհէին որ Եստուած կը ճանչ-
նան, ու զինքը չայր կը կոչէին ու կը դաւա-
նէին . թէ իրմէն կը վախնան ու զինքը կը սիրեն .
որ ատեն որ կրօնքին և անոր արտաքին արարողու-
թիւններուն կ'ապաւինէին՝ առանց Եստուածոյ դրայ
սէր ունենալու : Ուստի դուն Եստուածոյ երկիւղով
կը քալե՞ս : Քրիստոսի խաչին ոօրութիւններու
գէշ ընաւորութիւններդ շավելու շանք կ'անե՞ս ,
քու աշխարհային ցանկութիւններդ յ Առու յի-
մար երևակայութիւններդ , քու Ածութեւթեամք
անցուցած ժամանակիդ պիտի խօսրէր . ու ան ալ
ամէն օր ու ամէն ժամ ջանք ընելով՝ անոնց երև-
ան ելլելուն պէս : Քու պարտաւորութիւններդ
կատարելու ոտք ելած , ու արթուն ես : Վերջին ը-
րած գործքերդ առ ջիններէն աւելի աղէկ են :

Տղան իր հօրը, ու ծառան իր տիրոջը պատիւ
կ'ընէ. թէ որ ես հայր եմ, իմ պատիւս ո՞ւր է, ու
թէ որ տէր եմ, ինձմէ վախնալը ո՞ւր է, կ'ըսէ ձեզի
զօրաց Տէրը, ո'վ քահանաներ՝ որ իմ անունս
կ'անարդէք. և գուք կ'ըսէք. Քու անունդ ի՞նչ
բանով անարդեցինք: (Առաջ. + առ. + 6 :)

Աս ժողովուրդը միայն շրթունքներով զիս կը պատուէ . բայց իրենց սիրտը հեռացած զատուած է լինծուէ ; (Մասսակարգութեան 8 :)



Կը խոստովանին թէ զԱստուած կը ճանչնան : և իրենց գործքովը կ'ուրանան , պիղծ ու անհնազանդ ըլլալովնին , և ամէն բարի գործի անպիտան : (Տէր . առ . 16 :)

Որոնք Աստուածպաշտութեան կերպարանքը ունին , բայց անոր զօրութիւնը ուրացած են . և գուն ասոնցմէ մէկդի՛ կեցիր . (Ի Տէ՛ . դ . 5 :)

19 . Երդեօք պէտք չէ՞ որ ամէն բանէն աւելի միտքդ բերես , և աս խորհրդածութիւնովը զգածեալ ըլլաս , թէ մահուան ժամուն ընաւ ուրիշ մէկ բան քեզ չկրնար բռնել ու մսիթարել բայց միայն Տէր Յիսուս Քրիստոսի փրկարար գիտութեանն ու հանոր միջոցովը երկինք երթալու հոգեւոր յոյսը :

Ուր է ով մահ՝ քու խայթոցդ , ուր է ով գերեզման՝ քու յաղթութիւնդ : Վահին խայթոցը մեղքն է , ու մեղքին ոյժը՝ օրէնքը : Բայց գոհութիւն Աստուծոյ , որ մեզի յաղթութիւն կուտայ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռքովը : (առ Կորն . ժե . 55—57 :)

Թէ և մահուան շուքի ձորին մէջն ալ պըտըտիմ , չարէն պիտի չվախնամ . վասն զի դուն իմ հետս ես . քու ցուպդ ու դաւազնդ՝ անոնք իսպիտի մսիթարեն : (Սառ . իդ . 4 :)

Երանելի են ան մեռելները՝ որոնք Տէրոջմով կը ննջեն , այո՝ կ'ըսէ Հոգին , որ իրենց աշխատութենէն հանգչին . ու իրենց գործքերը իրենց ետեէն կ'երթան : (Յայտ . ժդ . 13 :)

20. Ակերջապէս՝ աս պարզ հարցումները գրող
հեղինակը սրտանց կը թախանձէ որ մտմտաս թէ
աչեղ դատաստան մը պիտի ըլլայ թէ՛ արդարնե-
րուն և թէ՛ մեղաւորներուն . թէ դուն և ես ու
բոլոր աշխարհք ան օրը պիտի կայնինք՝ չէ թէ հան-
դիսատես եղողի մը պէս , բայց ան ատեանին մէջ
մէկ մասն ունեցողի պէս . և ամենամեծ ու ամենա-
սուրբ Արարէն արդար վճիռը պիտի լսենք :

Ու երբոր Որդին մարդոյ իր փառքովը գայ ,
և բոլոր սուրբ հրեշտակները իր հետը , ան ատե-
նը իր փառաց աթոռը պիտի նստի . Եւ անոր
առջեւը պիտի ժողվութին բոլոր ազգերը , ու զանոնք
իրարմէ պիտի զատէ , ինչպէս նր հովիւ մը ոչխար-
ները այծերէն կը զատէ : (Մատ . ի՞ն . 31 , 32 :)

Տէր Յիսուսին երկինքէն յայտնուելու ատենը
իր զօրաւոր հրեշտակներովը , Բորբոքած կրակով
վրէժ առնելու անոնցմէ՝ որ Եստուած չեն ճանչ-
նար , և որ մեր Տէր Յիսուս Քրիստոսի աւետա-
րանին չեն հնազանդիր . Որոնք պիտի պատժուին
յաւիտենական՝ սատակումով՝ Տէրով երեսէն ու ա-
նոր զօրութեանը փառքէն : (ը Ծակ . առ . 7 — 9 :)

Եսոր համար դուք ալ պատրաստ կեցէք , քան-
զի Որդին մարդոյ կու գայ անանկ ժամու մէջ՝ որ
դուք չէք կարծէր : (Մատ . ի՞ն . 44 :)


Եւ ասոնք պիտի երթան յաւիտենական տան-
ջանքը , իսկ արդարները՝ յաւիտենական կեանքը :
(Մատ . ի՞ն . 46 :)

ԱՅՐԵՒԹՅԱԿԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես գրուած հարցումներն ու պատասխանները
կարդացի՞ր : Ենոնք Առւրբ Գիրքէն առնուած չե՞ն
արդեօք : Ենոնք ըստ ինքեան խիստ հարկաւոր չե՞ն :
Ենոնք քուներկայ և յաւիտենական օդուտիդ վերա-
բերեալ բաներու չե՞ն նայիր : Դուն զանցառութիւն
չըրի՞ր արդեօք, կամ գործիդ մէջ զբաղած ըլլալուդ՝
կամ աշխարհիս զբօսանքներուն ու յիմարութիւն-
ներուն փափագ ունենալուդ : Ո՞չ գոնէ՛ հիմա
խելքդ գլուխդ ժողվի՛ որ աս բաները հասկնաս +
ու քու վերջին վախճանդ խորունկ մտմտա : Ի՞նչ
մեծ շնորհք է քեզի որ ան տղէտ վիճակիդ ու մե-
զացդ մէջ աս կեանքէս չկտրուեցար . Եստուծոյ
թագաւորութենէն ու իւր ներկայութենէն չվանտ-
ուեցար : Եկանջ դի՞ր ու մտիկ ըրէ Եւետարա-
նին խօսքերուն : Եստուած շնորհք տալու պատրաստ
կեցած է : Ողորմութեան գուռուը տակաւին բաց է
և տեղ ալ կայ ներս ընդունուելու : Հիսուս
Քրիստոս աշխարհք եկաւ մեղաւորները փրկելու,
այո՛ մինչև անգամ մեղաւորներուն բուն իսկ դլու-
խը եղողն ալ : Իւր արիւնը կը մաքրէ ամէն մեղ-
քէ : Հիմա է ընդունելի ժամանակը, հիմա է
փրկութեան օրը : Եկո՛, խեղճ մեղաւոր, աս
բարձի թողի ըրած Փրկչիդ . անիկա արդարու-
թիւն, խաղաղութիւն և փառք կու տայ : Ենի-
կա՝ հաւատքով իրեն եկողներուն մէկն ալ դուրս

չձգեր : Աստուած տայ որ Տէրը դորձէ քու-
մէջք , իր հաճոյքին կամելն ու ընելը . և վախ-
ճանդ ըլլայ | Խաղաղութիւն և յաւիտենական
կեանք :

Ա.Ե.Բ.Պ.





Spec 54

6208

«Ազգային գրադարան



NL0108488

